

Մօնիսների ա. համաժողովը (Շերք. ՎԵՇ. № 41.)

Սեպտեմբերի 8-11-ը ն. ա. տեղի է ունեցել Համարություն գերման Մօնիսների ա. ժողովը, որին ներկայ է եղել 800 մարդ։ Համաժողովի նախագահ պրօֆ. Օստվալդը փակեց ժազովը հետեւալ խօսքերով. «Ես փակում եմ Մօնիսների առաջին ժազովը և բաց եմ անում մօնիստական դարձ։ Համաժողովում վճռուել է հաստատել միջազդային մօնիստական կազմակերպութիւն, և յանձնարարուած է Համբուրգի մօնիսներին այս բանով զբաղուել։

ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆՈՒԹԻՒՆ.

Խոլամազիւրեան դասընթացքներ (Շերք. ՎԵՇ. № 41.)

Եերքին գործերի նախարարութիւնը հոգեօր գործերի գեղարտամենտի գիրեկոսը Հօփմեյստը Խարուղինի նախաձեռնութեամբ իսլամադիտութեան դասընթացքներ է հաստատել։ Դասընթացքի նպատակն է պետական ծառայութեան մէջ եղածներին պատրաստել գործելու մահմետականաբնակ վայրերում, որպէս ծանօթներ մահմետականների լեզուին, նիստ ու կացին և մուսուլմանական կետնը կրօնական պայմաններին. որովհետեւ փորձը ցոյց է տուել, որ այն վարչական հաստատութիւնները, որոնք հազարդակցութեան մէջ են մուսուլմանների հետ, իրանց ձեռքի տակ չունենալով մուսուլմանների միջավայրում գործելու յատուկ պատրաստութիւն, մեծ մասամբ զրկուած են ոչ միայն իրանց կառավարած տղաքարնակութիւնը ճանաչելուց, այլ մինչեւ անդամ բաւականաշափ տեղեկութիւն չունեն մուսուլման ազգաբնակութեան առանձնաշատուկ կենցաղավարութեան մասին։ Դրա համար էլ դասընթացքի գլխաւոր նպատակը կը լինի ունկնդիրներին ծանօթացնել արար գառական լեզուի հետ (որ մահմետականների աստուածպաշտութեան լեզուն և ամբողջ մուսուլման աշխարհը միացնողն է), այնուհետեւ ծանօթացնել

կրտնի, նրա մելինութիւնների և գլխաւորապէս տառուածարանակոն կարգերի ու մուսուլմանական իրաւունքների հետ և վերջապէս ձանօթացնել. մուսուլմանների մէջ համատարած թաթարական լեզուի հետ, Վճռուած է դասընթացքներին սահմանափակ թուով ունկնդիրներ ընդունել այն պաշտօնեաներից, որոնք ամեն տարի կրտշուեն դասընթացքի ամբողջ ծրագիրը անցնելու համար Այս տարի դասընթացքի պարապմունքը սկսուել է հոկտեմբեր ամսին և ունկնդիրները 12 հոգի են:

Յուսիկ Արքապա.

— ՀՀ ՀՀ —

Պ Ա Ն Կ Ա Ջ Ա Բ Ի Ժ Ա Կ Ա Ն

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՑԻԼԱՐԻ ԶԵԽԱԿԱՅՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

(Շարունակութիւն)

3. Յստ Ցիլերի առաջնորդ և երկրորդ աստիճանները այնպէս պէտք է իրարից որոշակի տարրերուն, ինչպէս տարբեր են այդ երկու աստիճանների հեմբը կազմող «հոգեկան գործունէութիւնները»: Տարբերութիւնն այն է, որ անալիզ աստիճանը մշակում է ապերցիպտիւ, հին մտապատկերները, այն ինչ սինթէզ աստիճանը միմիայն նոր մտապատկերները: Այդ երկու տեսակի մտապատկերների մշակման ժամանակ մտքերի շրջանը այլ կերպ է կազմուած, ուստի և «մի զրութիւնից արտգութեամբ այլ զրութեան անցելը դասաւանդաման յառաջազիմութեան համար անյարմար է»: Առաջին երկու աստիճանների իրարից բաժանելու պահանջը աշխատում է Ցիլերը հոգեշանական իրողութիւնների վրայ հիմնել, սակայն այդ դրութիւնները և գրանցից հանած եղակացութիւնները պէտք է անճիշտ համարել:

Միանդամայն իրաւոցի է այն կարգերը, որ հին և նոր մտապատկերները հոգեկան միեւնոյն ըովանդակութիւնները չեն, սակայն այս երկու տեսակ մտապատկերները, ինչ-